

## ԱՐԳԱՐ ՊԱՅԱԶԱՏԻ “ԽԱԼԴԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԲԱՆԱԼԻՆ”

Ահա կատարում եմ խնդիրդ, պատուական խմբագիր: Ասացիք որ դործը լուրջ է եւ վկայուած եւ ինձ պարտաւորեցիք զբաղիլ մի հարցով որ ներկայումս դուրս է հետաքրքրութեանս չըջանէն: Գրքի վերնագիրն արդարեւ պարտիչ է: Ժամանակով էջմիածնի միտքն եւ յայտնի բանասէր Գալուստ Տէր-Մկրտչեանը, ձեմարանի սաներէն մէկից լսելով ուտի լեզուի -ալի վերջաւորութեամբ բայածեւը, այն միտքն էր յայտնել, որ ուտիերէնը խնամութիւն ունի ուրարտական կամ խալդ լեզուի հետ: Ողբացեալ Ն. Մառը հերքեց ուտի ալի-ի եւ խալդական ալի- լծորդի ենթադրեալ նոյնութիւնը, առանց ժխտելու որ սեպագիր անձանցով լեզուն կարող է, եւ պէտք է որ կովկասեան լեզուախմբի հետ մերձաւոր առնչութիւն ունենայ: Մի ենթադրութիւն որ դործնական արդիւնք տալ չէր կարող նախ քան կովկասեան լեզուական առեղծուածը չլուծուէր: Սաղա-գիտութիւնը այժմ բաւականին յառաջացել է, իր դիւանն ունի, ուրոյն բառամթերքը, քերականական ինչ ինչ կանոններ երեւան հանած: Կովկասեան առեղծուածը թէ եւ մնում է տակաւին իր նախկին վիճակի մէջ, բայց յայտնի է, որ այլեւս յոյս չկայ բնաւ կապելու խալդերէնը վրացերէնի հետ, ինչ որ երազում էր խալդագիտութեան հիմնադիրը Սայաթ: Վրացերէնը լաւագոյն ներկայացուցիչն է կովկասեան լեզուախմբի՝ այն մտքով որ անցեալում յայտնի է, դարաւոր գիր եւ գրականութիւն ունի եւ ուրեմն համեմատութեան համար նպաստաւոր պայմաններէն զուրկ չէ: Սորա անյաջողութիւնը յուսադիրէ երեւոյթ չէ միւս հարե-

ւան լեզուների յաւակնութեան նկատմամբ: Նրանց թւում եւ ուտիերէնի:

Հասկանալի է թէ ինչո՞ւ «Սաղաքերէնի բանալին» մեղ մեծ հաւատ չի ներշնչում: Գիրքը տեսնելուն պէս աւելի եւս սաստկացաւ մեր թերահաւատութիւնը: Արտաքին տեսքն արդէն յուսահատիչ է: Սոսքս թղթի մասին չէ եւ ոչ տիպի, այլ գրութեան մեքենայի, որ յատուկ է ամեն մի գիտական աշխատութեան:

Սակայն Պ. Հ. Աճառեան իր յանձնարարական յառաջարկում մեծապէս դուրստում է Պ. Պայազատի դործը: «Նորակերտ նորանշան չնաշխարհիկ դործ» է անուանում եւ «ոչ վայրապար, այլ դուշակ կամիմ լինել, ասում է նա, զի այս դործ լինելոց է գլուխ անկեան նորոգ բեւեռագիտութեան»: Նոյն յառաջարկում աւետում է որ Պ. Պայազատը գտել է ուտիերէնի մայրենի լեզուի մէջ 49 բառ, որ յար եւ նման են խալդերէնին թէ՛ հնչումով եւ թէ՛ իմաստով եւ որ այս պարագան մի կատարեալ «սքանչանք» է: Եւ որպէսզի իր վկայութիւնը անխոհմտութիւն չհամարուի, օրինակ է բերում sidiistuni բառը որ խալդերէն է եւ որին որպէս թէ համադոր է ուտիերէն sidastune բառը եւ երկուսն էլ նշանակում են «կառոյց, շինեաց»: Յայտարարութիւնը յանդուգն է եւ անհաւատալի. այսպիսի մի երկար եւ դժուարահնչիւն բառ անփոփոխ մնալ եօթերորդ դարից Ն. Գ. մինչեւ քսաներորդ դարը Յ. Գ., իրօք լեզուագիտական հրաշք է: Բնական է որ ցանկանայինք ամենէն յառաջ ստուգել այս նմուշը:

Ահա ի՞նչ է ասում հեղինակը այս առթիւ. sidustuni բայը «կազմուած է երկու բայարմատից եւ. tesun օժանդակից. sid, us, tesun. ներկայ ուտիւրէն լեզուն ունի զբանցից կազմուած հետեւեալ բայերը. sid-besun=քանդել, sid-phesun=քրքրել, us-besun=փայտեղէն շինել, փայտ անել, us-tesun=փայտել, չէնքը փայտով կառուցանել: Հետեւաբար նշանակում է քանդուածը փայտով կառուցանել: Sidust բայը լեզուն ւնոռացութեան է տուել» (էջ 20):

Ռուսերէն բաժնում նոյն բառին անդրադառնալով տալիս է հետեւեալ մեկնութիւնը, որ թարգմանում ենք հարադատօրէն՝ անտեսելով բնագրին լեզուական թերութիւնները. «Sidiistuni բայ է եւ ձեռով անցեալ կատարեալ եզակի երրորդ դէմք: Այս բայը մոռացուած է կենդանի լեզուում, բայց իր կազմից երեւում է որ բուն աղուաներէն բառ է. որովհետեւ sid-besun բայը, որ այժմ գործածական է կենդանի լեզուում, նշանակում է փորել եւ անել՝ չէնքերի վերաբերմամբ, այսինքն կառուցանել: Sidiistubi կազմուած է երեք բառից, sid=փոր(ում), iis=գործ, besun=անել՝ կենդանի լեզուում, as=գործ, աշխատանք, tu=գերանուն երրորդ դէմք, bi=անցեալ կատարեալ besun բայի» (էջ 81):

Հասկանալի թէ ի՞նչ է ուզում ասել իր կրկնակի մեկնաբանութեամբ Պ. Պայազատը: Խաղաղական արձանագրութեանց մէջ մի բառ կայ որ կարդացւում է Si-di-i-is-tu-u-ni եւ որի ենթադրական իմաստն է՝ շինեց, կարգի բերեց: Պ. Պայազատ սխալմամբ թէ դիտմամբ գրում է հայերէն բաժնում sidustuni, փոխանակ sidiistuni ի, իսկ ուտիւրէնում ուղղում է իր սխալը: Առաջին դէպքում բառի մէջ տեսնում է ուտիւրէն sid- որ միտյնակ ոչինչ չի նշանակում, բայց si օժանդակ բայի հետ՝ sid besun=քանդել իմաստն ունի, եւ us, որ դարձեալ օժանդակ բայի հետ՝ us-besun կամ us-tesun, նշանակում է փայտ կամ փայտեղէն անել: Երկուսը միասին, ուրեմն sid-us որ համադր է համարում խաղաղական sid- ust- uni եւ պէտք է որ նշանակէ, նրա հաշուով, քանդուածը փայտով կառուցանել: Աւելի անհեթեթ բան զր- ժուար է երեւակայել: Սակայն հեղինակը նկա-

տել է որ քննելի բառը sidust- չէ, այլ sidiistuni- այսինքն երկրորդ վանկը՝ -us- չէ, այլ -iis. ուտի առանց յիշելու որ սխալուել է, մի այլ գիւտ է անում, իրրեւ թէ այս iis-ը ուրիշ բան չէ, քան ուտիւրէն us-ը՝ գործ, աշխատանք:

Հետեւապէս կը ստացուի sid-iis = քանդ + գործ, նոյնքան անհեթեթ կազմութիւն, որչափ քանդ + փայտ: Հայերէն բաժնում չէր բացատրել բառի վերջին մասը՝ -tuni, այժմ լրացնում է պակասը, յայտարարելով որ -tu- գերանուն է երկրորդ դէմք: Իսկ - ni ի՞նչ է, եթէ tu - գերանուն է. պատասխան չկայ: Այնուհետեւ մեկնում է sidiistu=bi բայի վերջին վանկը, ասելով որ besun ուտիւրէն բայի անցեալ կատարեալն է. ուզում է ասել կատարեալի ընդունելութիւն: Sidiistubi=sid (= քանդ) -iis (=գործ) -tu (=նա) -bi (=արած). նշանակում է վերջ ի վերջոյ՝ « շինեց »: Սա բայի երրորդ դէմքն է, առաջին դէմքը կը լինի՝ sid-iist-zu-bi = շինեցի, երկրորդ դէմքը՝ sid-iist-un-bi = շինեցիր: Այսպէս - tu- որ երրորդ դէմքի յայտարար էր, մնում է նաեւ երկրորդ և առաջին դէմքերում, առանց պատճառելու հեղինակին որեւէ մտահոգութիւն:

Օրինակը պերճախօս է եւ լաւ վկայ, թէ ի՞նչպէս է դիտում, մտածում եւ դատում ուտիացի լեզուագէտը: Որպէսզի աւելի հասկանալի լինին նորա թիւր մտքերը, պէտք է դիտենալ հետեւեալը: Ուտիւրէնում, ինչպէս հայերէնում՝ մանաւանդ ժողովրդական լեզուում, սովորական է անել=besun բայի գործածութիւնը. խաղ անել, վտր անել, պաշխ անել, անգամ օտար բառերի հետ՝ ֆուսկ անել, հիւրմաս անել և այլն: Առնենք ֆուսկ անել=ուտիւրէն komag besun [ժողովուրդը արտասանում է «քոմագ», ուտի և ուտիւրէնում եւս komag]. ներկան արտայայտելու համար առնում է՝ komag + zu=ես + desa(=ներկայի ընդունելութիւնը=հայերէն անող) այսինքն՝ թէ արտայայտենք հայերէն՝ ֆուսկ եւ անող, որ նշանակում է եւ ֆուսկ եւ անում: Դու ֆուսկ եւ անում=komag + un (=գու) + besa նա քոմակ է անում — komag e (=նա) besa, եւ այսպէս յօքնակին, տեղը դնելով՝ մենք, դուք և ուրիշ գերանունները:

Նոյն կերպ արտայայտում է եւ անցեալ կատարեալը, միայն ի հարկէ առնուած է կատարեալի ընդունելութիւնը, որէ bi, նոյն besun բայի:

Հետեւաբար՝ ֆումակ արի=komag-zu-bi  
ֆումակ արիւ=komag-un-bi  
ֆումակ արաւ=komag-e-bi եւն:

Իսկ իսկական բայերը, այսինքն՝ որոնք խոնարհուած են առանց besunի նման օժանդակ ներքի, օրինակ անսել=artsesun, կազմուած են ներկան աւելցնելով բայարմատին զերանունական յօդերը: Այսպէս՝

Arrsi-zu (=նիս + ես) = անսում եւ.

artsi-n (=նիս + դու) = անսում ես.

artsi-ne (=նիս + նա) = անսում ե. եւն:

Խաղաղական սեպագիր արձանագրութեանց մէջ յաճախ պատահում են -ubi et uni յանդող բաւածներ, որոնցից -ubi համարում է առաջին զէմք եւ -uni երկրորդ զէմք՝ անցեալ կատարեալի: Այսպէս՝

|                      |                         |
|----------------------|-------------------------|
| sidiistu-bi = շինեցի | sidiistu-ni = շինեց     |
| hau-bi = նուաճեցի    | hau-ni = նուաճեց        |
| zadu-bi = կառուցի    | zadu-ni = կառուց        |
| teru-bi = զետեղեցի   | teru-ni = զետեղեց       |
| nahu-bi = տարի       | nah-ni = տարաւ. եւայլն. |

Խաղերէնում յայտնի չեն ո՛չ եղակի երկրորդ եւ ոչ յոգնակի առաջին եւ երկրորդ զէմքերը, երրորդը՝ վիճելի է: Չնայելով այս հանգամանքին՝ Պ. Պայազատը հնարաւոր է գտել համեմատութեան դնել եւ այս անձանօթ զէմքերը ուտիւրէնի հետ: Նա համոզուած է, նախ քան ապացուցանելը, որ ուտիւրէնը հին աղուաներէնն է եւ սա՝ հին խաղականը: Ուտիւրէնը նրա համար, նոր խաղերէն է, իսկ խաղերէնը՝ հին ուտիւրէն, մէկը՝ կենդանի, միւսը՝ մեռած լեզու:

Յիշելով ուտիւրէնի komag-zu-bi, եայլն, artsi-ne բայերի վերջին -bi եւ -ne, փորձուել է նոյնացնել խաղական u-bi եւ u-ni վերջաւորութիւնների հետ, առանց ուշ զննելու որեւէ օրէնքի: Տեսանք որ -bi ընդունելութիւնն է besun բայի, նշանակում է արած եւ կիրարկելի է բոլոր զէմքերի համար՝ եղակի եւ յօքնակի: Մինչդեռ խաղական -bi թէ ubi նշան է եղակի առաջին զէմքի եւ ծագումը տակաւին յայտ-

նի չէ: Կան ոմանք որ կարծում են որ երբեմն եւ երրորդ զէմքի նշանակութիւնն ունի. բայց հաւաստի չէ: Պ. Պայազատը կարծում է որ խաղերէնն ubi ոչ թէ առաջին, այլ երկրորդ զէմքն է որին համապատասխանում է ուտիւրէն e-bi՝ komag-e-bi բայում: Ուտիւր եւ իրաւունք է համարում վերականգնել խաղերէնի առաջին եւ երկրորդ զէմքերը՝ հետեւողութեամբ ուտիւրէնի

|                |             |
|----------------|-------------|
| sidiis-zu-bi?  | komag-zu-bi |
| sidiist-un-bi? | komag-un-bi |
| sidiist-u-bi   | komag-e-bl. |

Այսպէս էլ zadnbi, terubi, եւ այլ բայերը խոնարհել է ուտիւրէնի վրայ եւ զէմ առ զէմ ուտիւրէնի ձեւերի, այնպէս որ անբոժ ընթերցեղը կը կարծէ թէ խաղական բայի խոնարհումը իսկական է եւ սեպագրի համաձայն եւ ո՛չ ուտիւրի Պայազատի եմեւակայութեան թէ ստեղծագործութեան արդիւնդ: Ամբողջ էջեր բռնած եղ այս անիմաստ կամ, ինչպէս ինքն է ասում, «ենթադրական» խոնարհումները:

Նոյնը եւ uni յանդի վերաբերմամբ: Այս անգամ օրինակ է ծառայել artsi-zu = անսում ե: Սրա հետեւողութեամբ կերտել է.

|              |            |
|--------------|------------|
| Sidiistu-zu? | = artsi-zu |
| sidiistu-un? | = artsi-n  |
| sidiistu-ni  | = artsi-ne |

Ի հարկէ Պ. Պայազատի համար, արժէք չունի, որ խաղերէն sidiistu-ni անց. կատարեալ է, իսկ artsi-ne ներկայ: Նմանութիւնն էլ լոկ մի տառի մէջ է:

Ոչ միայն քերականական ձեւերը, այլ ամենէն առաջ բառերը, նրանց ստուգաբանութիւնը եւ համեմատութիւնը չառ ստոր են զիտական մակերեւոյթից: Ստուգաբանական փորձերը ժողովրդական կոչուած մեկնութիւններից այն կողմ չեն անցնում: Ո՛չ sidiistene եւ ոչ sidastene բայ գոյութիւն չունի ուտիւրէնում, այլ Պ. Պայազատի հնադիտութեան արդիւնք է: Sid ինչ կը նշանակէ, ինքն էլ որոշակի չգիտէ, ֆանդե՞լ քե փորել. իսկ as = գործ, հաւանօրէն թուրքերէն is = գործ բառն է, որ ուտիւրէնում զարձկ է՝ ըր՛շ, ի ձայնի խուլ հնչման հետեւանքով: Հարեւան ցախուր բարբառում, is

gaas=գործ անել, ուր gaas=besun ուտիերէնի: Ամէն պարագային, ենթադրելով անգամ որ as բուն ուտիական ինչք է, sid+as+te= «*ֆանդելով շինել*» բացարձակ անհեթեթութիւն է, եթէ չասենք աւելին:

Կասկածելի է նաեւ arhiuruliani=ընճանիֆ, և ուտիերէն arhiur-ulux = «*ցեղնումեղը*» համեմատութիւնը: Հաւանական է որ վերջին տարրը՝ -ulux թուրք՝ ուշուխ=ընճանիֆ բառն է, առաջինը՝ arhiur թերեւս արարական ohl=ուտիական -ur յոգնակի նշանով:

Ուտիերէնը, ինչպէս կովկասեան միւս լեզուները, հաշուելով նաեւ հայերէնը, անհամար փոխառութիւններ ունի արար-պարս-թուրք լեզուներից: Կան նաեւ հայերէն շատ և երբեմն հին՝ բառեր ուտիերէնի մէջ, նաեւ վրացերէն և զրացի լեռնական լեզուներից: Մեծ զգուշութիւն է հարկաւոր, ուրեմն, չշփոթելու համար օտար բառերը բուն ուտիերէնի հետ: Պ. Պայազատը այս մասին չի մասնում, այնքան որ պատրաստ է նոյնիսկ vartanli, yaghubli և նման ակներեւ նոր թրքական lu յանգը հին խաղերէն համարել (էջ 13): Խաղք. Kirani ուտ. kirami, որ աղիւս է նշանակում և յունարէն keramos որից եւրոպական céramique. Sirabo խաղերէն բառը ուղղում է zirabo, որ համեմատի ուտիերէն zorabu կամ zirobu, որ որպէս թէ Ղարաբաղի zer=խոշոք, հսկայ:

Այնինչ zoraba է պարս. zorba = ուժեղ, և zer = ժողովրդական զրո (էջ 51): Խաղք. usmasini, որ նշանակում է բարձր կամ թերեւս կարողութեամբ, ինչպէս վերջերս մեկնեցին, Պ. Պայազատ իր սեփական խիղախ կարծիքը ունի: Xaldinini usmasini, պէտք է կարգալ, նրա կարծիքով, Xaldini ni us ma si ni, ուրեմն հինգ բառ՝ nius=մասալ, զոն, ma=ուր, si=նա, ni=k, իմաստը՝ «*Խաղ (Xaldin) ևս մասալ, ուր որ նա շինի*»:

Այսպիսի անգամահատութիւններ առատօրէն սփռուած են զբոսւմ, որոնց վերայ կանգ առնել ժամապաճատութիւն է: Հայ գեղջուկ սրամտութիւնը իր ստուգարանական գիտելիքն ունի. օր. մինիստր ministre բառը Ռուսները առել են Հայերից. մինիստր նշանակում է՝ մի՛ նստիր, որովհետեւ մինիստրը իրաւունք չունի նստել թագաւորի առաջ: Յաւելով պիտի նկատենք որ Պ. Պայազատի ստուգարանու-

թիւնները այս կարգի գիտեր են: Vili և patara բառերը մասնաւորապէս հետաքրքրական են որովհետեւ այն հազուադիւր տարրերէն են, որոնց նշանակութիւնը կասկածից դուրս է: Առաջին մասին Պ. Պայազատ նկատում է որ բառը այժմեան կենդանի բարբառում գոյութիւն չունի, բայց Վարդաշէն գիւղում այդպիսի ազգանուն կայ, որ այդպէս կոչուել է, ջրարաշխական դործի հետ կապ ունենալու պատճառով, ինչպէս հայերէն Զրպետեան: Իսկ patara մնացել է ուտիերէնում և նշանակում է նախ՝ մաս, կտոր և ապա՝ հաւաքավայր առեւտրի: Այսպիսի մեկնութիւններ կարդալուց յետոյ, այլեւս յոյս չի լինում լրջութեան որեւէ նշոյլ գտնել ուտիացի խաղաղէտի աշխատութեան մէջ: Պատմական յայտարարութիւնները Խաղերի և Աղուանների անցեալի, կամ նրանց չինական ծագման վերաբերեալ, հեղինակի անձնական կնիքն են կրում ևւ աւելի արժէք չունին քան իր լեզուագիտական արկածախնդրութիւնները:

Ոչ ցանկութիւն և ոչ իրաւունք ունինք Պ. Պայազատին խորհուրդ թելադրելու: Կուղէինք միայն որեւէ կերպ պիտանի լինել եթէ ոչ իրեն, գէթ հայ գրին: Մեղ թուում է որ խաղական հարցին լրջօրէն մօտենալու համար անհրաժեշտ է ամենից առաջ ասորագէտ լինել, ընդհանուր գիտական պատրաստութիւն ունենալուց յետոյ, աւելի ճիշդ սեպագրագէտ: Առանձնայատուկ զբաղանութիւն է, իր կարգ ու կանոնն ունի արտաքին ձեւի և մտքերի էութեան և արտայայտութեան եղանակի մէջ: Այս բանին տեղեակ գիտունը, երբ ենթադրութեանց է դիմում, պահում է չափ ու սահմանը, համակերպուելով սեպագիր զբաղանութեան ոգուն և ոչ թէ ջրից օղ ցատկելով: Այդպիսին երբեք թոյլ չի տալ մտածել թէ alsusine մակդիրը կարելի է հասկանալ՝ al-su-si-ne վերին գիշերուան տէրին իմաստով:

Միւս կողմից ուտի լեզուն որեւէ բանալի համարելուց յառաջ՝ կարեւոր է նախ և առաջ հիմնովին ուսումնասիրել լեզուն. բաւական չէ ուտիացու գիտութիւնը, այլ հարկաւոր է այդ գիտութիւնը անցրնել լեզուագիտական հնոցով, որոշել օտարամուտ տարրերը, և կազմել դուռ ուտիականի բառամթերքը իր քերականական

ձեւերով հանդերձ: Ոչ մի կասկած չունինք, որ Պ. Պայազատը քաջ գիտէ ուտի լեզուն, ինչպէս որ մի հայ գիւղացի գիտէ իր բարբառը վարպետօրէն: Այս բնաւ բաւական չէ լեզուագիտական եւ մանաւանդ ստուգարանական դաշտում արշաւներ կատարելու: Մի բան եւս հարկաւոր է, որը սակայն դիւրութեամբ ձեռք չէ բերում, եւ լաւ է թողնել եւ անել ինչ որ հնարաւոր է: Ուտիերէնի եւ ընդհանրապէս լեռնականների լեզուների ուսումնասիրութեան կարեւորութիւնը անփիճելի է, եթէ ոչ ձեռաւոր խաղաղատութեան, զոնէ հայերէնի ուսումնասիրութեան տեսակէտից: Կարիք չկայ ուտիերէնը համեմատել հին աղուան անծանօթ լեզուի հետ, ինչպէս անօգուտ է գրաւաստակ լինել խաղերէնին մօտեցնելու խժրժանքով: Ուտիերէնը ազգակից է իր մերձաւոր հարեւաններին. օր. Յախուրի, Ազուլի, Արչինի, Վայկուն: Շատ հաւանական է որ Արցախ, Ազուլի, Հարճղանի, Վայկուն աշխարհագրական անունները պահելու են երբեմն Հին Ուտիքի շրջանում ապրող երեք ցեղերի յիշատակը: Արցախի եւ Յախուրի կապը մեզ շատ հաւանական է թուում: Նաեւ Աղահէճ որ անտարակոյս Լահիճ անունով յայտնի ցեղն է: Եթէ յիշածս ցեղերի լեզուն լուրջ ուսումնասիրութեան նիւթ եղած լինէր, թերեւս մի գիպող առիթ կ'ունենայինք Ղարաբաղի բարբառի անհատական գծերի ծագումը լուսարանել, որ եւ խրատական կը լինէր եւ ուրիշ գաւառաբարբառների լուսարանութեան համար:

Անտարակոյս, Պ. Պայազատ աւելի արգիւնաւէտ գործ կատարած կը լինէր, եթէ իր եռանդը եւ ուսումնականի ծարաւը նուիրէր ամբողջովին ուտի լեզուին եւ հետամուտ լինէր հաւաքելու եւ հրատարակելու բոլոր այն նիւթերը որոնք պէտք են նոյն լեզուի ուսումնասիրութիւնը գիտական հոգի վերայ դնելու համար: Գրի առնել գրոյցներ, պատմութիւններ, հաւաքել բառամթերք, դարձուածներ, քերականական ձեւեր՝ առանց ջանք գործելու մեկնաբանել — ահա՛ մի աշխատանք, որի համար երախտապարտ կը մնայ գիտութիւնը եւ որը Պ. Պայազատի ձեռնհասութեան սահմաններումն է:

Պարիսի Ազգային Գրադարանում կայ մի ձեռագիր քերականութիւն ուտի լեզուի, որի հեղինակն է Կարապետ դպիր Ղահրամանեան Աւթանտիլեան, եւ սա կատարել է իր աշխատութիւնը Յարութիւն արքեպիսկոպոս Սանահնեցու պատուէրով: Բրուսիայի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս հետաքրքրուել է այդ գործով եւ ոմն Ղազար քահանայի ձեռքով ընդօրինակուած մի օրինակ ստացել: Ինչպէս երեւում է՝ այս օրինակից է արտագրուած Պարիսի ձեռագիրը 1859 թուին: Գործը շատ համառօտ է, բայց հետաքրքրական: Ինչ որ զարմանալի է, —պի յանգը ձայնափոխուած է փի—ով եւ ոչ բի—ով. հեղինակը իրեն անուանում է Տաշրուլաղցի: Պ. Պայազատը կարող է հայթայթել մի օրինակ եւ այս գործից իր աշխատութեան համար:

Ն. ԱՌՈՆՑ